ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 15 1986

ԲԱԲԿԵՆ ՁՈՒԳԱՍՁՅԱՆ

ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԱՅ ՄԱՄՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ

1

ԱԻԵՏԱՐԱՆ

(Փարիզ, Սիրարփի Տեր-Ներսեսյան)

ԺԳ դար

Թերթ՝ *296։* Գրիչ և ստացող՝ *Յովհաննէս։* Նյութ՝ *մագաղաթ։* Մեծութիւն՝ *9×12,5։* Գրություն՝ *երկսյուն։* Գիր՝ *բոլորգիր։* Տող՝ *18։* Մանրանկարչություն՝ *Մարկոս՝ 65բ, Հովհաննեսը Պրոխորոսի հետ՝ 222բ, կիսախորաններ՝ 66ա, 223ա, լուսանցազարդեր՝ բուսական։* Կազմ՝ *չիր։* Պահպանակ՝ *մագաղաթ 2 վերջից։* Վիճակ՝ *սկզբից և միջից պակաս թերթեր։*

Ծանոթ. *Ձեռագիրը նախկինում պատկանել է Մաղաքիա արք. Օրմանյանին՝ անվանի արվեստագետ պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանի մորեղբորը։ 1982 թ. մայիսի 15-ին Փարիզում հարգելի պրոֆեսորը տողերիս գրողի միջոցով մատյանը նվիրեց Մատենադարանին. գրանցվել է 10866 թվահամարի ներքո։*

Հիշատակագրություններ

1. *64բ. Ջտառապեալ գծողս յիսեսջ[իք] ի Տէր, զՅոհաննես եղկ[ելի]։*
2. *127բ. Ջստացաւղ սուրբ Աւետարանիս զՅոհաննես և զծնող և զեղբարսն իմ և վարդապետս յիսեսջիք ի Տէր աղաչեմ։*
3. *222բ. Ջտառապեալս Յոհաննես յիշեսջիք ի Տէր։*

2

ԱԻԵՏԱՐԱՆ

(Արթիկ քաղաք, Կարապետ Վահրամի Կարապետյան)

ԺԵ դար

Թերթ՝ *232։* Գրիչ, ծաղկող և վայր՝ *անհայտ։* Նյութ՝ *թուղթ։* Մեծություն՝ *12×17,5։* Գրություն՝ *երկսյուն։* Գիր՝ *բոլորգիր։* Տող՝ *22։* Մանրանկարչություն—*Մարկոս՝ 68ա, Ղուկաս՝ 118բ։ Սկզբնաթերթեր՝ 89ա, 119ա, 191ա։ Լուսանցազարդեր՝ բուսական։* Կազմ՝ *նոր, կաշեպատ տախտակ։* Պահպանակ՝ *թուղթ։* Վիճակ՝ *սկզբից, միջից և վերջից բազմաթիվ թերթեր ընկած։*

Ծանոթ. *Սույն ձեռագիրը 1829 թ. Արևելյան Հայաստան է բերվել Կարինի շրջանի Կան գյուղից և պահվել Կարապետյանների ընտանիքում։*

Ձեռագրի հասցեն մեզ տրամադրել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս, ճարտարապետ տիկին Ալեքսանդրա Երեմյանը։

1982 թ. հոկտեմբերի 22-ին քայքայված և հրդեհից տուժած այս մատյանը փոխադրվել է Մատենադարան, որտեղ ձեռագրագետ Օնիկ Եգանյանը խառնված թերթերը վերադասավորել և ճշգրտել է ըստ բովանդակության։ Ձեռագիրը վերանորոգումից հետո վերադարձվել է տիրոջը։

Հիշատակարան հետագայի

1. 67բ. Աւարտեցաւ սուրբ Աւետարանս սրբոյն Մինասայ տաճարին ձեռամբ Տէր Ոստիկայն վա[ր]դապետին։ Դիրս որ ի մէջ տաճարին գրեցինք պահօք և պատարագօք երեք հատօք նուն չափօք չուր։ Թվին հայոց ՉԽ (1491)-ին սեպտեմբերին ԺԸ (18), գծողս մի (ընդհատված)։

2. 67բ. Յիշատակ է Աւետարան։ Յիշատակ է թվին հայոց այս ՉՀ (1521)—ին։

Մանոր. Սույն նկարագրությունը կատարվել է 1983 թ. մայիսի 15-ին։

3

ԱԻԵՏԱՐԱՆ

(Լուսակերտ (Նախկին Թալիբօղլի) գյուղ, Արթիկի շրջան, Անուշավան (Արզուման) Հովհաննեսի Կարապետյան)

ԺԵ դար

Թերթ՝ 316+1 (կրկ. 65)։ Գրիչ, ծաղկող և վայր՝ անհայտ։ Նյութ՝ թուղթ։ Մեծություն՝ 14,5×21։ Գրություն՝ երկսյուն։ Գիր՝ բոլորգիր։ Տող՝ 21։ Մանրանկարչություն՝ Մարկոս՝ 95բ, Ղուկաս՝ 151բ, Հովհաննեսը Պրոխորոնի հետ՝ 244բ։ Սկզբնաթերթեր՝ 96ա, 152ա, 245ա։ Լուսանցազարդեր՝ բուսական և թեմատիկ։ Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ՝ վրան արծաթյա երեք խաչեր և մետաղյա չորս ձեռքեր։ Պահպանակ՝ թուղթ։ Վիճակ՝ սկզբից, միջից և վերջից բազմաթիվ թերթեր ընկած։

Մանոր. Սույն ձեռագիրը 1828 թ. բերվել է Ղարսի շրջանի Բագրամատ գյուղից։

Ձեռագրի հասցեն մեզ տրամադրել է Արթիկ քաղաքի ճարտարապետ Ռազմիկ Հովսեփյանը։

1982 թ. հոկտեմբերի 22-ին քայքայված ու պատառոտված այս մատյանը փոխադրվել է Մատենադարան, որտեղ ձեռագրագետ Օնիկ Եգանյանը խառնված թերթերը վերադասավորել և ճշգրտել է ըստ բովանդակության։ Ձեռագիրը վերանորոգումից հետո վերադարձվել է տիրոջը։

Հիշատակարան հետագայի

244ա. Յիշատակ է սուրբ Աւետարանս Նորարևին, հօրն՝ Շահպարոնին, մօրն՝ Զմրուրին, եղբարն՝ Խաչատուրին, թոռինն՝ Աստուածատուրին, կողակցին իւրոյ՝ Շամիխանին, դստերացն՝ Շահրիստանին, Կուլիստանին, Մարգարտին։ Աւետարանս Սեբաստիացի ի Պախճաճուկ գեղջէն կոչի։

Ով որ գտա ծախել կամի
Կամ գրաւի դնել տանի՝
Առցէ ըզմասն Յուդայի
Եւ պատիւն Կայենի։
Ով որ ըգտա խնամ տանի՝
Արքայութեան որդի կոչի,
Ընդ առաքեալսն գասեսցի,
Ամէն, ամէն և եղիցի։
Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի։

Ծանոթ. *Սույն նկարագրությունը կատարվել է 1983 թ. մայիսի 17-ին։*

4

ԺԱՄԱԳԻՐՔ

(Մարսել (Ֆրանսիա), Անդրե Սիսակյան)

ԺԶ դար

Թերթ՝ *[311]*։ Նյութ՝ *թուղթ*։ Մեծություն՝ *10,5×15,5*։ Գրություն՝ *միասյուն*։ Գիր՝ *շեղագիր*։ Տող՝ *18*։ Մանրանկարչություն՝ *Գրիգոր Նարեկացի (՞) 5բ (խիստ վնասված), սկզբնաթերթ՝ 6ա, Խաչելություն՝ 31բ (խիստ վնասված), Ներսես Շնորհալի (՞)՝ 62բ (խիստ վնասված), Հակոբ Մծբնեցի՝ 289բ, Պարսամ Ճգնավոր՝ 303ա, լուսանցազարդեր՝ ծաղկագիր, թռչնագիր և ավետարանական թեմաներով*։ Կազմ՝ *կաշեպատ տախտակ*։ Պահպանակ՝ *2+2, թուղթ*։ Վիճակ՝ *բավարար*։

Ծանոթ. *Սույն նկարագրությունը կատարված է 1982 թ. մայիսի 5-ին Մարսելում։*

5

ԱԻԵՏԱՐԱՆ

(Արովյան քաղաք, Դավիթ Հովհաննեսի Մելիքյան (Մելիքսեթյան)

ԺԶ—ԺԷ դար

Այս ձեռագիրը, որ «Թուխ մանուկ» է կոչվել, 1949 թ. Իրանի Թեհրան քաղաքում տեսել և նկարագրել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Համազասպ Ոսկյանը։ Նկարագրությունը տպագրվել է «Հանդէս ամսօրեայում», 1953 թ., էջ 95—97։

Ձեռագրի վերջին ստացող Դավիթ Մելիքյանը (Իրանի Բուրվառ գավառի Գուվզ գյուղից) 1968 թվականին Թեհրանից ներգաղթել է Հայրենիք։ Դ. Մելիքյանի հացեն մեզ է տրամադրել Իրանից հայրենադարձ Սալբի Կարապետյանը։

Ձեռագիրը տեսել ենք 1976 թ. սեպտեմբերի 18-ին։ Որոշ ժամանակ անց այն հանձնվել է Էջմիածնի Վեհարանի մատենադարանին։

6

ԱՒԵՏԱՐԱՆ

(Թբիլիսի, Քյուրքչյան Էդուարդ Արշավիրի)

Ստամպոլ ՌԾԸ—1609

Գրիչ՝ *Միքայել Թոխատցի։* Ստացող՝ *Տեր Ստեփանոս Աղճաղալացի։* Թերթ(՞)։ Նյութ՝ *թուղթ։* Մեծություն՝ *16×21,7։* Գրություն՝ *երկսյուն։* Տող՝ *20։* Գիր՝ *բոլորգիր։* Մանրանկարչություն՝ *խորաններ 10, Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես ավետարանիչներ, կիսախորաններ 4, լուսանցազարդեր, թուչնագիր զարդագրեր։* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, վրան թիթեղյա մեծ խաչեր՝ անարվեստ։* Վիճակ՝ *բավարար, ջուր տեսած, կազմի երկրորդ փեղկը ջարդված, որի կեսը առանց կաշվի։*

Մանոթ. *Չիք էջահամարներ։*

Հիշատակարան գրչի

(Իե պրակ, 1ա) Փառք... Գրեցաւ սուրբ Աւետարանս թվին ՌԾԸ (1609) ի մայրաքաղաքն Ըստամպոլ ի դուռն կոմրուկու սուրբ Նիկողայոսին, առաջնորդութեան Կեսարացի Գրիգոր *քաջ բարունապետին, թագաւորութեանն* Սուլթան Ահմատին. *Աստուած զիւր սուրն կտրուկ անէ, ձեռամբ անարժան* Թոխատցի Միքայէլին *ի վայելումն* Աղճաղալացի Տէր Ըստեփանոսին ‖ *(Իե պրակի 1բ էջ) (թերթը պատռված, առաջին տողերը չիք)... և զկենակիցս, զննջեցեալս և զկեն... Աստուած զյիշող... է իւր միւս անգամ գալստեանն. ամէն. Հայր մեր։ Այլև յիշեցէք զստացող սորին զԸստեփաննոս քահանայն և զհայրն իւր զՍրմպատն և զմայրն իւր զՓաշան և զմամն իւր զԱրև տիկինն և զիւր իրիցակին զՊաճրին և զդուստրն իւր զԱրև տիկինն և վա... էծոցն զվարդապետն և զեղբայրն իւր զՎ..ատն և զքոյրն իւր Շահմելիքն և զԿուլպահարն։ Դարձեալ յիշեցէք զհոգևոր եղբարքն զԹուրինն և զՊապաճանն և զորդին իմ։ Այլև յիշեցէք զյաշխատող սորին և Աստուած զյիշողդ յիշէ իւր միւսանգամ գալըստեանն. ամէն. Հայր մեր։*

Զունի ոք հրաման և իշխանութիւն զԱւետարանս զայս ի դումրէ (՞) ձեռացն հանել ոչ յիմոց և ոչ յաւտարաց։ Եւ թէ ոք յանդգնի՝ զմասն Յուդայի ընկալցի. ամէն։

Հետագայի

(Առաջին պրակ, 4ա) Ես Տէր Խաչատուրս *հրամանաւն Աստուծոյ թվին ՌՃՂԹ (=1750) ամսիեան մատռին. ամէն։*

(Իե պրակ, 2ա) թվին Խաչատուրին *իմացումն լինի, որ ՌՃԾԸ-ին (=1709) իշեալ է. Աստուած իւր կեանքն երկար առնէ և զինքն անփորձ պահէ ի չարեաց. ամէն։*

Մանոթ. *Սույն նկարագրությունը կատարվել է 1981 թ. դեկտեմբերի 10-ին Թբիլիսի քաղաքում։ Ձեռագրի հասցեն մեզ հայտնել է Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդի արտասահմանյան բաժնի աշխատակից Զավեն Սարգսյանը։*

7

ԱԻԵՏԱՐԱՆ

(Հրազդան, Միկրոշրջան, Շահմիրզա Սարգսի Կարապետյան)

Քաբաf գյուղ (Սպահանի շրջան) ՌԿԳ—1614

Գրիչ և ծաղկող՝ Զաքարիա Վանեցի։ Ստացող՝ Շաղոսկի։ Թերթ՝ 266։ Նյութ՝ թուղթ։ Մեծություն՝ 25,5×20։ Գրություն՝ երկսյուն։ Տող՝ 25։ Գիր՝ բոլորգիր։ Մանրանկարչություն՝ վեցօրյա արարչագործություն՝ 1բ, 2ա, 2բ, 3ա, 3բ, 4ա, 4բ, 5ա, 5բ, 6ա, Ավետումն՝ 6բ, Մկրտություն՝ 7ա, Պայծառակերպություն՝ 7բ, Ոտնալվա՝ 8ա, Խորհրդավոր ընթրիք՝ 8բ, Բժշկություն անդամալուծին՝ 9ա, Մատնություն՝ 9բ, Զոհաբերություն Աբրահամու՝ 10ա, Հոգեգալուստ՝ 10բ, Հարություն Քրիստոսի՝ 11ա, Համբարձումն՝ 11բ, Քրիստոսը գահի վրա՝ 12ա, խորաններ 10, Մատթեոս՝ 19ա, Մարկոս՝ 87բ, Ղուկաս՝ 131բ, Հովհաննես՝ 203բ, ավետարանիչներ, սկզբնաթերթեր՝ 4, լուսանցազարդեր, թռչնագիր զարդագրեր։ Կազմ՝ կաշեպատ տախտակ։ Վիճակ՝ սկզբի 10 թերթերը և կազմի մի մասը այրված։

Մանր. Ձեռագրի հասցեն մեզ է տրամադրել Հրազդանցի գրքասեր Մելիքսեթ Պողոսյանը։

Հիշատակարան

Գրչի

356ա. Փառք անսկզբնական Հաւր և որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ անդրաւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Սովորութիւն է աստուածային արանց միշտ եւ հանապազ խոկեալ աստուածային պատուիրանս ի տրէ եւ ի գիշերի, միշտ զվերինն խորհել, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ։

Եւ վասն բազում պատճառի բազումք փափագին ջերմեռանդ սիրով եւ յըղձալի ցանկութեամբ արդիւնայ եւ գործս կատարեալ։ Նախ վասն յաւիտենական եւ անմահ կենացն զանցաւորս արհամարհեն եւ զայն ստանան կեանս, որ մնացական է։ Որպէս ասէ Տէրն՝ Երթայք գործեցէք մի զկորստական կերակուրն, այլ կերակուրն որ մնայ ի կեանսն յաւիտենականսն։ Երրորդ զի հրամայէ Տէրն՝ Գանձեցէք ձեզ գանձս ի յերկինս, ուր ոչ ցեցք եւ ուտիչք ապականեն եւ կամ գողք ական հատանեն եւ գողանան։ Գրեմք զգիրս աստուածային, որ զամենայն գանձ եւ զամենայն բարիքն ի յինքն պարունակեալ ունի։ Նախ զվերին իմաստութիւն եւ ապայ զամենայն սքանչելայգործութիւնս որ ի սմայ։ Երրորդ վասն անջինջ յիշատակութեան առաջի Աստուծոյ, որպէս ասէ մարգարէն՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընդանի յԵրուսաղէմ։ Չորրորդ վասն քաւութեան եւ թողութեան մեղաց մերոց բարեխաւս, որպէս ասէ մարգարէն՝ զՄեղս քո ողորմութեամբ քաւեսցես եւ զանաւրէնութիւն քո տրաւք տնանգաց։

Քրիստոս գթած և ողորմած
Քրիստոնէից Տէր Աստուած
Զողորմութեան քո զդուռն բաց,
Լուր տառապեալ քրիստոնէացս։
Յամէն դիմաց ենք մեք նեղած,
Ի ամէն ազգաց կոխան եղած.
Եկեղեցիք բազումք քակած,

Բազում խաչեր է խորտակած,
Գիրք 'ւ Աւետարան գերի վարած,
Կանայք և տղայք գերի վարած,
Գիշեր ցերէկ եմք վարանած,
Անհայրենիկեալ եւ զարհուրած
Եւ ոչ ունիմք հանգստութիւն,
Այսպիսի կամք տարաչկուած
Եւ այսպէս եմք ի տարտարոս,
Որպէս գնաս ի մէջ յոլեաց,
Է սոյ ամէն ի մեր մեղաց,
Որ բարկացար Հայոց ազգաց։

Ի Թվականիս Հայկազեան տումարիս ՌԾԳ ամին (1604) եւ փոքր Թվականին Հռոմայեցւոց Մ. եւ ՂԲ. ամին, ի ժամանակիս, յորում Շահ Աբաս արքայն պարսից եկեալ պաշարեաց զԹարվէզ եւ կոտորեաց զաւրս տաճկաց, բան զի գնացեալ էին Ալի փաշէն եւ ամենայն զաւրս տաճկացն ի Թաւրիզոյ ի Նախջուանայ, ի յԵրեւանայ ի վերայ Ղազի բէկին ի Սալմաստ եւ ի դառնալն նոցա զամենեսին սրայխողխող արարեալ զնոսա եւ բազումք ի քրիստոնէիցն անդ կոտորեցին եւ առեալ զքաղաքն Դայէվրէժ՝ եւ անցեալ գնաց էառ զՆախիջեւան եւ անցեալ գնաց ի յԵրեւան եւ պաշարեաց զնա ամիսս Թ. եւ հարկի կացուցեալ էառ զքաղաքն։ Բայց չէ փոյթ երկարել մեզ զպատմութիւն մարտի պատերազմիս այսորիկ, այլ եկեսցուք ի Թաւրէզ եւ ասասցուք փոքր ի շատէ զնեղութիւն եւ զչարչարանս քրիստոնէից ազգիս, թէ զինչ եղեւ ընդ մեզ։ Քանզի ել հրաման արքայէն թէ ով որ յաւժարեսցի բնակել աստի՝ կացցէ, եւ ով որ ոչ յաւժարեսցի՝ երթիցեն իւրաքանչիւր յիւրեանց։ Յայնժամ բազումք ի հայոց եւ տաճկաց յուղի անկեալ գնացին ի ճանապարհ զաւուրս Բ. իսկ անաւրէն պարոնայք քուրդ ազգին զամենեսին զնոսա զայրսն սպանեցին եւ զկանայսն եւ զտղայսն գերի արարին եւ զայն տեսեալ նեղն եւ ողորմեալ ազգս Հայոց յահ եւ յերկիւղի կայաք ի տուէ եւ ի գիշերի լային հանապազ, հայրք ի վերայ զաւակաց իւրանց միշտ եւ հանապազ վտարանդեալ կային թէ զինչ լինիցիմք։ Յայնժամ ողորմած եւ մարդասէր Աստուածն որ ոչ կամի զմահ մեղաւորին, արկեալ գութ ի սիրտ արքային՝ ետուր հրաման հայոց թէ հայք ազատք են. բայց երթալոյ ումեք հրաման չկայ, թող որ կացցեն աստի մինչեւ ի գարունն եւ յորժամ ի մարտ ամիսն մտանիցեն՝ ամենեքեան ելեալ գնասցեն ի Շաւշ քաղաքն, որ է Ասպայան։ Յայնժամ տառապեալ ազգս հայոց զայն լուեալ ուրախացաք յուրախութիւն մեծ եւ փառս տուեալ Աստուծոյ աւրհնեցաք զարարիչն մեր եւ յորժամ եղեւ գարուն եղ հրաման ի յարքայէն, զի զազգս հայոց ի թիւ բերցեն եւ արարին զհամարք, իմացան՝ ԳՃՌ. անձինք էին եւ տուին նաֆաղայ եւ բերին ուղտք եւ այլ աւարք թագաւորական եւ վեր առեալ զազգս հայոց բերին ի Ասպայհան. բայց ազգն պարսից ոչ սիրեն զազգս մեր։ Այժմ այսպէս եմք եւ զապագայն Աստուծոյ միայն է գիտել։

Այժմ ասասցուք թէ ինչ եղեւ առ ազգս հայոց, զի ել հրաման յարքայէն, զի երթիցեն եւ գերեսցեն զտունս հայոց եւ գնացեալ գերեցուցին զԿարս, զՇիրակունիս, զԲասեն, զԿաղզըւան, զԱղջայղալէն, զԱլաշկերտ, զԴաւգսու, զԽնուս, զՄալազկերտ, զՏիքլիս, զՏումանիս, զՁլըր, զԱրտայխան, զԿոլայ, զՇաքի, զՇրւան, զԱմախի, զԲանակ, զՓառկերտ, զՅուխտիք, զՄամրվան, զԹանխուն, զՍեպեր, զԹէրջան, զԿամախ, զՎան, զԱրճէշ, զԱրծկէ, զԲերկրի, զՈստան, Ջա-

ռիշատ, զԵրեւան, զնախչուան, զՋուղայ, զԱղբակ, զՍալմաստ, զԹաւրէզ, [զ]Գանջայ մինչեւ ի Դամուրղափու: Եւ այլ բազում գեաւղ եւ քաղաք, զոր ոչ կարեմք ընդ գրով արկանել, զի ի Դարէվրէժու մինչեւ ի Թէոդորոյպալիս, որ Արզռում կոչեն, անմարդայբնակ արարին եւ Երեւանայ մինչեւ ի Թաւրէզ ԿՌ. գերի արարին, թող զայլսն եւ զոմանս սրայխոխոն արարին, զոմանս սովալչուկ զոմանս գետայհեղձ եւ զոմանս բրքայհեղձ եղեն, զոր ոչ կարեմք ի թիւ բերել եւ համարել: Այլ Աստուածն որ ստեղծեալ է, նայ բովանդակէ զնոսա: Զի զամենայն աշխարհն հայոց աւերեցին եւ գերեցուցանելով, այրելով եւ սպանանելով եւ զայն տեսաք խաւարեալ աշաւք մերովք եւ խոր խոցի սիրտ մեր եւ գալարին աղիքն մեր, զի այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, բայց ճար չունիմք քան զՔրիստոս, փառք բիւրապատիկ նմայ, գոհութիւն յաւիտեանս ամէն:

Արդ գրեցաւ եւ նկարեցաւ եւ կազմեցաւ սուրբ եւ հրաշալի եւ զսքանչելայգործ աւետարանս ի Ռ. եւ ԿԳ. (1614) թուին հայկազ[ե]ան տաւմարին եւ հռովմայեցւոց փոքր թվին ԳՃԲ. ամին ի յաշխարհս պարսից ի յերկիրս Գանդմանայ, որ է ի հուքմն Ասպայանայ, ի գեաւղս Քաբաք, ի դուռն Սուրբ Աստուածածնին, ձեռամբ Զաքարիայ իրիցոյ Վանեցոյ:

Արդ ցանկացող եղեւ սուրբ Աւետարանիս հաւատարիմ եւ աստուածայսէր կինն Շաղոսկի եւ ստացաւ զանանց մեծութիւն և զանառիկ փարթամութիւն ի հալալ արդեանց իւրոց, ետ նկարել եւ երանգ երանգ գունով զարդարել զսուրբ Աւետարանս հաւատարիմ կինն Շահոսկի յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց՝ հարն Բաճանդուրին եւ մարն Փաշաջանին եւ իւր կողակցին Միրզին եւ որդւոյն Կիրակոսին եւ միւս որդւոյն Սարգսին, եւ միւսոյն Աւաքին եւ դստերացն Դալլաքին եւ ամենայն արեան մերձաւորացն առհասարակ ամէն: Դարձեալ յիշեցէք զառաջ յիշեցեալսն ի Քրիստոս զՇահոսկինն եւ զեղբարքն զՊապիկն եւ զՄկրտիչն եւ զՄիրզէն եւ զիւր ամենայն արեան մերձաւորսն առհասարակ, զորս յիշեցաք եւ որք մնացին յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ ամէն: Այլ եւ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանպիտան գծողս եւ զծնաւղքն իմ զՏէր Յովաննէսն եւ զՈլու խաթուն եւ զկողակիցն իմ զՄահմուտ խաթունն եւ զքեռինն իմ Զարիջանն եւ զաշակերտն իմ զՄելքոնն եւ զհոգեւոր հայրն իմ զՏէր Յակոբն զուսուցող գրիս եւ արուեստիս: Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուածն որ առատն է ի տուրս բարեաց ձեզ յիշողացն եւ մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի ի միւս անգամ գալստեանն իւրում. ամէն: Հայր մեր որ յերկինս ես:

85ա. Յիշեցէք ի Քրիստոս զստացող սուրբ Աւետարանիս զհաւատարիմ կին զՇաղոսկինն եւ զկողակիցն իւր զՄիրզէն եւ զտղայքն իւր զԿիրակոսն, զՍարգիսն եւ զԱւաքն եւ զդուստրն զԴալլուաքն ու զամենայն արեան մերձաւորսն, յիշեցէք եւ զՇաղոսկու եղբարքն զՊապիկն, զՄկրտիչն, զՄիրզէն եւ զննչեցեալսն առհասարակ, որք յիշեցաք եւ որք մնացին եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալստեանն. ամէն: Գրեցաւ Ռ եւ ԿԳ թվին եւ Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն:

121ա. Գրեցաւ, նկարեցաւ եւ կազմեցաւ սուրբ եւ հրաշալի եւ սքանչելայգործ Աւետարանս ձեռամբ Զաք[արի]այ անարժան Վանեցոյ իրիցոյ ի յաշխարհս պարսից ի յերկիրս Գանդմանայ, որ է ի հուքմ Ասպայանայ ի գեաւղս Քաղաք, ի դուռն սուրբ Աստուածածնին, ՌԿԳ թվին:

129ա. (տարբեր գրով)

Զերբս գնայ տեղն երեւայ,
Մարմինս փտեալ փոշի դառնայ,
Գիրս յիշատակ առ ձեզ մնայ,
Թէպէտ խոշոր է գիր սորայ,
Այլ գիւրընթերցող գիտենայ,
Յերբ բանաս ընթեռնուս զսայ,
Մի բերան գգծողս յիշեայ,
Թէ զանունն անգէտիս խնդրես, նա,
Զաքարայ է քեզ ծառայ։
Ով ինձ ասէ մի ողորմի,
Յիսուս Փրկիչն իւրն ողորմեայ
Եւ պարգեւէ զանանց բարին,
Որ յաւիտեան երթայ մնայ, ամէն.

Հայր մեր (ապա բնագրի գրով)՝ «Յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զհաւատարիմ կինն զՇաղոս[կ]ին եւ զծնաւղքն իւր զԲահանդուռն եւ զՓաշաջանն եւ զայրն իւր զՄիրզէն եւ զորդիքն զԿիրակոսն, զՍարգիսն, եւ զԱւաքն, զդուստրն զԴալւաթն եւ զեղբարքն զՊապիկն, զՄկրտիչն, զՄիրզէնն եւ զամենայն ննջեցեալսն առհասարակ յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալստեանն։ Ամէն։ Հայր մեր, որ յերկինս ես...։

200ա. Յիշեցէք ի Քրիստոս զհաւատարիմ կին զՇաղոսկենն, որ ետացոյ զսուրբ Աւետարանս յիշատակ իւր եւ ծնողացն Բահանդուռին եւ Փաշաջանին եւ կողակցին Միրզին եւ զաւակացն Կիրակոսին, Սարգսին, Աւաքին, դստերն Դալ[ւ]աթին եւ Շաղոս[կ]ու եղբարց Պապիկին և Մկրտչին, Միրզին եւ ամենայն արեան մերձաւորացն առհասարակ ամէն. գրեցաւ ի Ռ եւ ԿԳ թվին ձեռամբ Զաքարայ Վանեցոյ երիցոյ յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալստեանն, ամէն։

355բ. (Նախ՝ ծաղկագիր, ապա տարբեր գրով)։ Գրեցաւ նկարեցաւ, կազմեցաւ սուրբ եւ հրաշափառ եւ հրաշազարդ եւ հրաշալի Աւետարանս ի ՌԿԳ թվին հայկազեան տաւմարին եւ հռովմայեցւոց փոքր թվականին ՅԲ. ամին եւ մեծ թվին ՌԳՃԿԶ ամին ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ թագաւոր մի ի պարսից եղեայ[լ] Շահ Աբաս անուն եւ զաշխարհս Հայոց աւերեաց եւ այրելով աւերելով գերայցուցանելով, այսպէս եմք ի տառապանս եւ զապագայիցն Աստուծոյ միայն է գիտել։

Զերբս գնայ, տեղն երեւայ,
Մարմինս փտեալ փոշի դառնայ,
Սայ յիշատակ առ ձեզ մնայ,
Թէպէտ խոշոր է գիր սորայ,
Այլ գիւրընթերցող գիտենայ
Երբ որ բանաս կարդաս զսայ,
Մի բերան գգծողս յիշեայ։

360ա. Յիշեցէք զՄիրզի ծնաւղքն զհայրն Բէկաղէն եւ զմայր Խազրէվարդն եւ զՏէր Խաչատուրն, զՏէր Մելքիսէթն, Բարսեղն, Ամիրն, Ըռստակէսն, Ամիրջանն, Ամիրբէկի ծնաւղքն, պապն Ղուզիկն, հայր Վիրապտուր, Ամիրբէկին կողակիցն Աղասուլթանն, դստերքն Թանկխաթունն, Եղիսաբէթն, Անթառամըն,

Կարիանէն, Քրիստոսատուրն, Միրումն, Ոսկերաքէն, Ամիրբէկի քոյրն Եղսապետն, զՍալարն, զԿիրակոսն, [զ]Ուրֆուբեկն, զՋալն, զՅակոբջան, զՍարգիսն, զՈւլէն, զԽոռամջան, զԽավադեղն, զՋանդուլի:

Հետագայի

ա

130ա. Թւին 1852 փետրվարի 25. Սանգիբարանցի Տէր Կարապետս Յօհանէին *հանգիպեցայ ի սոյն Աւետարանոցս և ցանկացեալ եմ սատ ունենալ զանունս իմ մնալ ի յիշատակ։ Ով եղբայ[ր]ք իմ, զայս կարդալով մեղաւորիս միտ բերելով միով բանիւ զիս յիշելով լիցիք յիշմանն արժան գալով։*

բ

5բ. Սոյն ս. Զօրաւոր Աւետարանիս վերջին ստացողք Թովմա *և* Սարգիս Կարապետեան *և իրենց որդիք* Դհարմիրզա Թովմասի *և* Շահմիրզա, Ներսէս *և* Վաղարշակ Տ. Կարապետյաններ *1916 թ.* Փերիայի *գիւղերից թալանած հայերից պարսիկ անունով* Միրզական բախտիարցուց *ստացան մեծ արժեքով, որ իրենց անվանը սեփականութեան գանձ ու պատիւ շահեցին բոլոր հայ. շրջանում։ Եւ ամենայն հնազանդութեամբ ու մեծ երկիւղով ու յարգի պահում իրենց յատուկ սենեակում և ամեն տեղերից հայ ուխտաւորներ ուխտի են գալիս ու իրենց փափագին առնում։*

Եւ ահա այսպէս մօտ երեսուն տարի ծառայել ու պահել ս. Աւետարանը մինչև ս. ներգաղթին դէպի մայր հայրենիք 1947 թ., ուր և յիշեալներս մեր ընտանիքով սերտ սիրով ու մեծ գերդաստանում գնացինք Հայաստան։

Թող ամէն մի կարդացող ունկնդրի ու մեզ յիշի ամէն։

Թումաս և Սարգիս Կարապետեան

գ

6ա. Շահաբասեան գաղթի բերած հայերս Պարսկաստան *1605 թ. մեր նախնիք ապրեցին պանդուխտ հալածեալ վիճակում։ Թէկուզ հայրենիքի վառ կարօտով մեռան ու թաղեցին օտար հորիզոնում, բայց իրենց հայրենակէզ աւանդը մեզ սովրեցրին, թէ չմոռանաք հայ որդիներ ձեր մայր հայրենիք ու կգայ աւետեաց մի օր ներգաղթը դէպի մայր երկիր։ Ահա անցնելով որդից որդի մինչև օրս, մինչև արժանացանք, թէև նորա երազեցին, ափսոս չտեսան ս. ներգաղթը։*

Իսկ 1945 թ. հոկ. հնչեց մայր հայրենի հրաւէրն իւր պանդուխտ զաւակներին։ Օհ թէ ինչ անպատում ուրախ առիթ ուեց նժդէհ սրտերիս ու 1946 մեծն Ստալինեան կարգերի շնորհիւ ու հայ բարեգործների անդուլ գործունեութեամբ բացւեց ս. ներգաղթի ճամպան։ Նախ սկսեց* Գափլայ *ու* Բուրվարի *շրջանից։ Նոյն թւի օգոստոս ամսին մեկնեց առաջին կարաւանը.* Զառնա, Գուրջի, Բաղ-

* *Հավանաբար նկատի ունեն այն պատվիրակներին, որոնք Հայաստանից Իրան էին գնացել ներգաղթը կազմակերպելու համար։*

մովդի, Զշաղալ, Մարգիան, Ռոկնաբաղ, Փրշոդան, Ղաբաթ և մի մաս էլ Բուրվար, Քունսոր, Զարբաղ, Զանխոշ, Բուրֆ, Անավշ, Շավրավա, Փարհա և Զարբալ, Օրբաշիման:

Իսկ 1947 թ. նորից սկսեց կարաւանը, թէև բոլոր հայրիքաղան (հայրենաբաղձ) հայերն նախօրոք ծախել ու պատրաստուել էին: Մի տարի անգործ մնալուց յետոյ վերսկսեց (...), նախ (...) Աբարիֆ, Մուղանակ, Կուրան, Սանգսֆիդ, [Ղարա]ֆիարիզ, Ֆարաջաբաղ *(...) ուրախութիւնով մեկնեցին մայր հայրենիք (...). այս մեր ճանապարհորդութիւն և Զեզ ապագայի (...):*

դ

13ա. Սոյն ս. Զօրաւոր Աւետարան ներգաղթի պատճառի, որ չհաջողուեց Բուրսարուց մնացեալ 6 գիւղն դէպի մայր հայրենիք ներգաղթելու, բուրսարուց չէջին Թովմաս և Սարգիս Կարապետեանը. Թովմասն *դէպի* Քեազազ *գաւառն* Աբասաբաղ *գիւղն բնակուեց մինչև մէկ տարի՝ 1947 մայիս 22-ին,* Աբասաբաղից *չուեց Թեհրան 1949 մարտ 22-ին: Նաև* Սարգիսն *չուեց դէպ* Զաֆլաղ[ի] Զառնայ *գիւղն 1947 օգոստոս 6-ին և* Զառնուց *չուեց* Թեհրան *48-ի ապրիլի 6-ին: Մեծ տառապանքով և շարշարելով գրաղուեցին իրենց ապրուստին, որ իրենց նախկին ապրուստն գիւղատնտեսութիւն բոլորովին ձեռքից ելած. այդ շարշարանքին դիմեցին (=դիմացան):*

ե

5բ. (Այրված...) [ըն]տանիքը չհաջողուելով հայրենիք գնալու (...) Թեհրանում *միշտ ծառայելու (...) ի յիշատակ* Թովմաս *և (...) իր (...)* [Շահ]միրզէ *1961 թ. (...) ապրիլի 14:*

զ

201ա. 1961 ապրիլի 14:

Թովմաս և Սարգիս Կարապետյանները *աւանդ դրան Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին Թեհրան Հշմարիյէ թաղամասում, բայց դժբախտաբար անզգուշութեան պատճառով վառուեց:* Շահմիրզա Սարգսի Կարապետեան, Ներսէս Սարգսի Կարապետեան, Վաղարշակ Սարգսի Կարապետեան, Դարմիրզա Թովմասի Կարապետեան, Կարապետ Արմենակի Կարապետեան:

ը

1968 ապրիլի 29.

Սուրբ Զորաւար Աւետարանը բախտ վիճակուեց հայրենիք վերադառնա իր սուրբ (...) դա մեր ճանձնական պարտքն է հայր[է]ն[ի]քին:

Մանոթ. *Ձեռագիրը կոչվում է «Ս. Զորավոր Ավետարան»:*

1949 թ. Թեհրանում տեսել և նկարագրել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Համազասպ Ոսկյանը: Նկարագրությունը և գրչի հիշատակարանն ու հիշատակագրությունները բազմաթիվ սխալներով տպագրվել են «Հանդէս ամսօրեայում», 1953, էջ 97—102:

Զաքարիա գրիչը իր սուրբ հիշատակարանը նախապես գրել է 1611 թ.

ընդօրինակած Ավետարանում, որ ներկայումս պահվում է Մաշտոցյան Մատենադարանում (№ 5345)։ Տպագրված է «Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Ե. Լալայան, պրակ Ա, Թիֆլիս, 1915, էջ 839—842, ինչպես նաև «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 410—414։

Սույն նկարագրությունը կատարվել է 1976 թ. օգոստոսի 29-ին։

8

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐԶՆԿԱՑՒՈՅ ԱՍԱՑԵԱԼ «ԽՐԱՏ ՀԱՍԱՐԱԿԱՑ»

(Մարսել (Ֆրանսիա), Հայկազ Մարտիրոսյան)

Քարաձեռ անապատ ՌՃԼԵ=1686

Էջ՝ 412։ Գրիչ՝ Արսէն աբեղա։ Ստացող՝ Առաքել Եոհանցի։ Նյութ՝ թուղթ։ Մեծություն՝ 17,5×22։ Գրություն՝ միասյուն։ Գիր՝ բոլորգիր։ Տող՝ 27։ Մանրանկարչություն—սկզբնաթերթ՝ գլխազարդ, ծաղկագիր լուսանցազարդեր։ Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ։ Վիճակ՝ լավ։

Ծանոթ. Ձեռագրի վերջին ստացող Հ. Մարտիրոսյանը խոստացավ գալ Երևան և մատյանը անձամբ նվիրել Մատենադարանին։ Նա իր խոստումը կատարեց 1983 թ. սեպտեմբերի 9-ին։ Ձեռագիրը գրանցված է 10905 թվահամարի ներքո։

Սույն նկարագրությունը կատարվել է 1982 թ. մայիսի 26-ին Մարսելում։

Հիշատակարան

Գրչի

Էջ 408. Փառք... Որ ետ կարողութիւն մեղապարտ և անարժան գրչիս Արսէն աբեղիս, հասանել արտ հոգևոր և աստուածաքնար ամենալի սեղանոյս և ծաղկերանք և անուշահոտ բուրաստանիս, ի թուիս հայոց ՌՃԼԵ (1686) ի կաթողիկոսութեան տեառն Եղիայզար քարոնապետին և առաջնորդութեան մերոյ Աւետիս վարդապետին և Զ (6) անձ կրօնաւորացըս, որ կամք ի յայս Քարաձեռ անապատիս, որ կոչի Կարմիր վանք և սպասաւորեմք Սուրբ Կարապետու և աստուածընկալ Սուրբ Նշանիս, ամէն։

Յիշատակ է սուրբ գիրքս ի սուրբ Եոհանցի Առաքելին և հօրն Աւատանին և մօրն Հերիքին և կողակցին իւրոյ Աննային և եղբարցն Վարդապետին, Ստեփանոսին և Պետրոսին և իւր որդոյն Պարոնին, Արզիմանին և դստերն Լուսնկան։ Եւ Առաքել հրամանաւն Աստուծոյ և սուրբ հայրապետաց կանոնաւն Գ(3) անգամ գի յայտնի եղև բանն Աստուծոյ գի առաւ կին և յետոյ աղջմամբ և հառաչմամբ և արտասուօք հայցէր քահանայից թողութիւն և սրտալի փափագմամբ խնդրէր սուրբ հաղորդութիւն, գի հալալ արդեանցն ետու և ետ գրել և եղ յիշատակ ի դուռն Սուրբ Յոհաննու, գի վարձս ի յԱստուծոյ առցէ, ամէն։

Ով որ ազգ և ազինք կամ որդիք յանդգնին կամ աւժտեն կամ գրաւական դնեն կամ զյիշատակարանս կտրեն, սրբեն և քերեն, կտրի իւր յոյսն արքա-

յութեան, սրբի և քերի աղօթքն և ողորմութիւն ի վերջին աւուրն ահեղ առաջի աստենին Քրիստոսի, զպատիժն Կայենին կրեսցէ և զմասն ընդ Յուդային առցէ և ընդ խաչահանողացն դասեսցէ, ամէն: Դարձեալ յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զեղկելի մեղապարտ և անարժան, սուտանուն Արսէն գծուծ գրչակս և դուք յիշեալ լիցիջիք առաջի աստենին Քրիստոսի Ամէն: Հայր մեր որ յերկինս:

9

ՄԱՍՈՒՆՔ ԱՒԵՏԱՐԱՆԻ

(Արենի գյուղ (Եղեգնաձորի շրջան), Պավել Մամիկոնի Ղազարյան)

ԺԷ դար

Թերթ՝ 83: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 21,2×15,3: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Մանրանկարչություն՝ ծաղկագիր և թռչնագիր լուսանցազարդեր: Գլխատառերը՝ թռչնագիր: Վիճակ՝ անմխիթար, թերթահան, անկազմ, բազմաթիվ թերթեր պակասում են, թերթերը խառն:

Մանոր. Ձեռագրի տեր Պավել Ղազարյանը պատմում է, որ շուրջ 400 (՞) տարի այս մատյանը եղել է իրենց գերդաստանի սեփականությունը: 1912 թ. Ավետարանը բռնի կերպով տարվել է Բոնակոթ և այնտեղ էլ մաս-մաս է արվել: Պ. Ղազարյանի մեծ մոր թախանձանքներով մի մասը ետ է տրվել սկզբնական տիրոջը:

Սույն նկարագրությունը կատարվել է 1983 թ. օգոստոսի 26-ին:

10

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ ԲԱՆՔ ՁԱՓԱՒ

(Փարիզ, Սամվելյաններ)

ԺԷ դար

Թերթ՝ 328: Գրիչ՝ խասպեկ դպիր: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 9×12: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 20: Մանրանկարչություն՝ ճակատազարդեր՝ 1ա, 101ա, 139ա, 182ա, 234բ, 296ա, լուսանցազարդեր՝ բուսական: Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ: Պահպանակ՝ 2+2, մագաղաթ: Վիճակ՝ շատ վատ, ցեցակեր:

Մանոր. Ձեռագիրս նախկինում պատկանել է Հրանտ Սամվելյանին: 1982 թ. մայիսի 25-ին Փարիզում Սամվելյանի դուստրը՝ Ալիս Ասլանյանը և որդին՝ Սամվելյանը տողերիս գրողի միջոցով մատյանը նվիրեցին Մատենադարանին. գրանցվել է 10867 թվահամարի ներքո:

Բովանդակություն

1. 1ա—100ա. Յիսուս որդի հոր միածին և ճառագայթ կերպարանին...
2. 101ա—138բ. Բան հաւատոյ ոտանաւոր տաղիւ չափոյ—խոստովանիմ Աստուած ըզհայր...
3. 139ա—180բ. Շարադրութիւն հոմերական վիպասանութեամբ սակս

Հայկազեան սեռի և Արշակունեացն զարմի ի սկզբանցն մինչև ի վախճան.—Պարտական է հայր որդի...

4. 181բ—234ա. Ողբ Եղեսիոյ—Ողբացէք եկեղեցիք հարսունք վերին առագաստի...

5. 234բ—252բ. Բարձրացուցէք ըզտէր Աստուած մեր միաբան...

6. 253ա—260բ. Յաղագս յերկնի[ց] և զարթուց նորա...

7. 260բ—263ա. Ի խնդրոյ անուան նախագիծ տառից տանց—Միշտ էիդ անեղ բնութիւն բնաւորեցան...

8. 263ա. Նորոգող հնութեան մարդկան...

9. 263բ—267բ. Բան խրատու ուսումնականց մանկանց ի դիմաց այբուբենից տառից—Այբն առաջին գրեզ, տըղայ...

10. 267բ—271բ. Բան հաւատոյ վասն անեղին և եղելոց բարառնաբար ի դիմաց հայկական տառից—Այբըն անըսկիզբն ասէ Աստուած...

11. 271բ—279ա. Բան ներտառական ի խրատոյ ոգոց համայնից ի դիմաց մերոյն տառից—Այբն Աստուծոյ գրեզ մերձակայ...

12. 279բ—281ա. Յիշատակարան Առակացն Սողոմոնի արքայի ըստ տառից այբուբենից—Աստուածեղէն հոգւովն ի սմա...

13. 281ա—283ա. Անդրադարձութիւն տառից յիշատակարանաց—Քաղցրագունիս այս բաղձանօք...

14. 283ա—285ա. Վերստին յաւելուած ըստ անուան ոգողին և ըստ անուան գծողին նախագիծք տառիս—Սա մարգարէ աստուածաբան...

15. 285ա—287ա. Թուղթ մխիթարական տեառն Ներսէսի կաթողիկոսի հայոց առ ոմն իշխան յարենէլեան վասն որդւոյ իւրոյ տարաժամ մեռելոյ—Անտես է յոյսն աստուածային ըստ առաքելոյ...

16. 287ա—298ա. Նայեաց զոր ետ քեզ Թագնաբար...

17. 288ա—290ա. Բան մաղթանաց—Աստուած անեղ անհասական...

18. 290ա—295բ. Մաղթանք առ հրեշտակապետսն Գաբրիէլ և Միքայէլ և յամենայն զօրս յերկնաւորաց—Արդ պաղատիմք առ հոգեղէնսդ...

19. 295բ—320բ. Տեառն Ներսեսի Լամբրոնացւոյ ասացեալ—Շարժեալ ստիպէ հարկ տէրունի...

Հիշատակագրություններ

Գրչի

ա. 71ա.

Ցունայնութեամբ զանկեալ [յանձին]
[...] յիշման կատարեցին,
Կենաց բաշխօք միշտ զանթերին,
Ըզմեզ [յ]իշեն [ա]ռ ի բարին. Ամէն։

բ. 180բ. Միահամուռ՝ տուր Պարտապանէն մինչև աստ Գլ պիտի, բայց ԳԻԸ կայ։ Թէ պակաս է՝ ի գաղափարս է. մի՛ մեղադրեք ով ծրագրաւղ։

գ. 352բ. Ով եղկելի Խասպէկ գրչիր,
Անձն անարժան գործով զազիր,
Ջունիս արհեստ այլ ի նանիր,
Միշտ հիմնարկես զանունդ ի կիր։

Հեռագայի

ա. 1ա. (ճակատագրերի մեջ) Պողոս Ղ. Համամճեան (20-րդ դար)
բ. 320բ. (բնագրի վերջում) Պողոս Ղ. Համամճեան։

11

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

(Արթիկ քաղաք, Աղար Կիրակոսի Գաբրիելյան)

ԺԹ դար

Նյութ՝ թուղթ։ Մեծութիւն՝ 9×11,5։ Դրութիւն՝ միասյուն։ Գիր՝ շղագիր։ Տող՝ 15։ Կազմ՝ մուշամբա։ Վիճակ՝ բայքայված, սկզբից և վերջից բազմաթիվ թերթեր ընկած, էջերի դասավորությունը խառը և որոշ թերթեր գլխիվայր կազմված։

Մանր. Ձեռագիրը Արթիկ է բերված Ղարսից առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։

Սույն նկարագրությունը կատարվել է 1983 թ. հունիսի 25-ին։